

մինչև 28 բաժնուած միսր՝ 222,770 բա.  
յին է.

Այսպիսի մարդասիրութեամբ կըր-  
նան շատ աղքատ զազարոսներ առանց  
հառաջելու և նախանձու՝ մեծատան մը  
ճոխ սեղաններուն նայիլ:

## ՀՐՈՎԱՅՍ ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՊԱՏԵՐԾՎՄՆԵՐԸ

Հոռվմ քաղաքին վրայօք՝ սկզբնաւո-  
րելու ժամանակ՝ մեր արդի տեսած քա-  
ղաքաց գաղափարը պէտք չէ ունենալ.  
՚ի բաց առեալ միայն Ղրիմու քաղաք-  
ները՝ որք աւար, արջառ, և գիւղից բեր-  
քը՝ ՚ի ներքս ամփոփելու համար շի-  
նուած են: Հոռվմայ գլխաւոր տեղեաց  
հին անունները՝ ամենն ալ այս կերպ  
գործոց իմաստ մը կ'ակնարկեն:

Քաղաքը փողոցներ անզամ չունէր,  
եթէ այս անուամբ չկոշենք Հոռմ հաս-  
ցընող երկայնաձիգ ճամբանները: Ցնե-  
րը շատը պղտիկ էին և առանց կարգի  
շարուած: վասն զի արք միշտ աշխա-  
տութեանց և հասարակաց հրապարակ-  
ները զբաղած՝ երբէք տանց մէջ չէին  
նստեր:

Բայց քիչ ատենէն Հոռվմայ մեծու-  
թիւնը հասարակաց շնչերովը երևցաւ:  
Այն գործերը որ իրեն զօրութեանը վը-  
րայ մեզի մեծագոյն քաղափար տուին  
և դեռ ցայսօր կու տան՝ թագաւորաց՝<sup>1</sup>  
ատեն շինուեցան: Այն ժամանակէն ՚ի  
վեր յափտենական քաղաքին կառու-  
ցումը սկսուած էր:

Հոռմուլու և իրեն յաջորդները՝ գրե-  
թէ միշտ իրենց դրացիներուն հետ կը-  
ռուի մէջ եղան, քաղաքացիք՝ կանայք  
և կամ երկիրներ ունենալու համար. և  
քաղաք կը վերադառնային պարտեալ  
ժողովրդոց կապուտներովը, որք ցորենի  
որայք էին և հօտ. այս բանս քաղաքին

1 Տես Դիոնիսիոս Աղիկառնացւոյն զարմանքը՝  
երեցն Տարկուինիոսի շննել առուած կոյանոցնե-  
րուն նկատմամբ որք և ցայսօր կան: Հնակ. Հառա-  
գիք 3.

մեծ ցնծութիւն կը պատճառէր: Ահա  
յաղթանակացծագումը՝ որ յետոյ Հռով-  
մայ ՚ի ծայր մեծութեան համնելուն  
գլխաւոր պատճառ եղաւ: Հռովմիր զօ-  
րութիւնը շատ աւելցուց Սարինացւոց  
հետ միանալովը, որք պատերազմանէր  
և խիստ ժողովուրդք էին լակեդեմոնա-  
ցւոց պէս՝ որոնց սերունդքն ալ էին:  
Հռոմուլոս անոնց լայն վահանը առաւ՝  
փոխանակ իրեն ցայնժամամ՝<sup>2</sup> գործածած  
արդիական վահանին: Եւ պէտք է դի-  
տել՝ որ զՀռովմայեցիս աշխարհիս տէր  
ընելու ամենէն աւելի ձեռնտու եղողը  
այն եղաւ որ շարունակարար ամեն ժո-  
ղովրդոց զէմ պատերազմելով՝ իրենց  
սովորութիւնքը թողուցին՝ լաւագոյնը  
գտնելնուն պէս:

Այն ատեն՝ իտալիոյ հասարակապե-  
տութիւնք կը համարէին թէ թագաւո-  
րի մը հետ ըրած դաշնակցութիւննին  
զիրենք անոր յաջորդացը նկատմամբ  
չէր պարտաւորէր. ասիկայ իրենց հա-  
մար տեսակ մը համազգային<sup>3</sup> օրէնք  
էր. ուստի մէկ թագաւորէ մը նուա-  
ճուողը՝ ուրիշի մը ներքեւ զինքը ազատ  
կը սեպէր, և պատերազմներէ պատե-  
րազմունք կը ծագէին:

Նումայի խաղաղարար և երկայն թա-  
գաւորութիւնը շատ յարմար էր զՀռովմ  
իր չափաւորութեանը մէջ պահելու. և  
եթէ այն ժամանակը քիչ մասն եր-  
կիր ունեցած ըլլար և աւելի ալ զօրու-  
թիւն՝ շատ հաւանականութիւն կայ որ  
իրեն բաղդը մշտնջենաւորապէս կը հա-  
տատուէր:

Հոռվմայ բարգաւաճանաց պատճառ-  
ներէն մէկն ալ այն է՝ որ իւր թագա-  
ւորներն ամենն ալ մեծահանճար մար-  
դիկ եղան: Ուրիշ տեղ պատմութեանց  
մէջ այսպիսի երնելի քաղաքագիտաց և  
զօրավարաց անընդհատ շարք երբէք չի  
գտնուիր:

Ի սկզբան ընկերութեանց՝ Հասարա-  
կապետութեանց գլխաւորքն են որ օրի-  
նագրութիւնը կը հաստատեն. և յետոյ

1 Պլուտարքոս, Վարք Հռոմուլոսի:

2 Այս բանս գրեթէ բոլոր Հռովմայ թագաւո-  
րաց բովանդակ պատմութեանը մէջ կը տեսնուի:

օրինադրութիւնն է որ Հասարակապետութեանց զլուխներ կը հաստատէ:

Տարկուինիոս թագաւոր եղաւ առանց ծերակուտաէն և կամ ժողովուրդէն՝ ընտրուելու: Իշխանութիւնը յաջորդական ըլլալու վրայ էր, ինքը զայն միահեծան ըլլաւ: Քիչ ատենէն՝ այս երկու յեղափոխութեանց՝ երրորդ մ'ալ յաջորդեց:

Իր Սեքստոս որդին զլուկրետիան բռնաբարելով՝ այնպիսի գործ մ'ըրաւ, որով գրեթէ միշտ բռնաւորք աքսորեալ են իրենց իշխանական քաղաքէն. վասն զի ժողովուրդը՝ որուն այնպիսի գործ մը իր գերութիւնը աղէկ զգալ կու տայ, նախ ծայրայեղ որոշում մը կ'ընէ:

Ժողովուրդը դիւրաւ կրնայ զիջանիլ նորանոր հարկեր վճարելու. չի գիտեր թէ անօգուտ տեղը պիտի գործածուի իրմէ ուղուած ստակը. այլ երբ իրեն նախատինք մ'ըլլուի՝ սոսկ իր թշուառութիւնը կը զգայ, վրան բարդելով մտքէն անցած ամենայն կարելի չարիք.

Բայց այն ալ իրաւ է, որ լուկրետիայ մահը՝ եղած խոռվութեան միայն առիթ տուաւ. քանզի խրոխտ, գործունեայ, յանդուդն և պարսպաց մէջ փակուած ժողովուրդ մը՝ պէտք էր որ կամ լուծը անվրէպ թօթափէր և կամ իր բարքը մեղմացընէր:

Այս երկու բանէն մէկը պէտք էր ըլլալ, կամ չոռվմ իր վարչութիւնը փոխելու էր, և կամ պղտիկ և անշուք միապետութիւն մը մնար:

Արդի պատմութիւնը՝ այն ժամանակ չոռվմայ հանգիպածին նման՝ մեզի օրինակ մը կ'ընծայէ որ շատ նշանաւոր է. վասն զի մարդիկ ամեն ժամանակ նոյն կրքերը ունենալնուն՝ մեծամեծ փոփոխութիւնքը բերող առիթները տարբեր՝ այլ պատճառները նոյնք են:

Ինչպէս Անդղիոյ Հենրիկոս է թագաւորը ժողովրդական խորհրդարանին իշ-

<sup>1</sup> Ծերակոյտը թագաւորութեան ամամեջքին թագաւոր ընտրող ատենակալ մը կը գնէր, այս ընտրութիւնը ժողովրդէն պէտք էր հաստատուիլ: Տե՛ Դիակոս Ալեքսանդր, Պ. Ա. Բ. Գ. Դ.

խանութիւնը աւելցուց մեծամեծները ընկճելու համար, Սերվիոս Տուղղիոսն ալ իրմէն առաջ ծերակուտիւն ատենանը անզօր ընելու համար ժողովրդեան արտօնութիւնները շատցուց: Այլ ժողովուրդը աւելի յանդգնելով՝ երկու միապետութիւններն ալ տապալեց:

Տարկուինիոսի բնութեան կենդանա գիրը շողաքորթող չէ եղած, և բռնաւորութեան դէմ խօսող ատենաբանները իրեն անունը երբէք չեն մոռցած, այլ իր դժբաղդութենէն առաջ ունեցած ընթացքը, պարտեալ ժողովրդոց ցուցած քաղցրութիւնը, առատաձեռնութիւնն առ զօրականս, իր պահպանութեանը համար այնքան մարդիկ որսալու ունեցած ճարտարութիւնը, պատերազմական քաջութիւնը, դժբաղդութեանը մէջ ունեցած երկայնամտութիւնը, և Հռովմայ ժողովրդեան դէմ առանց թագաւորութեան և ընչից ըրած և կամ ընել տուած այն քսանամեայ պատերազմը, և իր յարատե հնարագիտութիւնները, շատ աղէկ կը ցուցընեն թէ ինքը արհամարհելի մարդչէր:

Ապագայից տուած դասակարգութեան աստիճանքը ուրիշ բաներու պէս՝ բաղդին հաճոյիցը ենթակայ է: Վայ համբաւոյն այն իշխանին՝ որ ընկճեալ է յետոյ տիրող կողմնակցութենէ մը, և կամ ջանայ նախապաշարում մը ջընջել, որ իրմէն եագր գեռ կ'ապրի:

Հռովմ թագաւորները պքսորած ըլլալով, միամեայ հիւպատուններ զրաւ. այս բանս ալ շատ նպաստեց իրեն այն բարձր աստիճան զօրութեան համելուն: Իշխանք փառասիրութեան ժամանակներ ունին իրենց կենացը մէջ, որուն ուրիշ կրքեր և նոյն իսկ զատարկութիւն կը յաջորդէ. այլ Հասարակապետութիւնը ամէն տարի փոխուղ առաջնորդներ ունենալով, որք կը ջանային իրենց իշխանութեան ժամանակը հոչակաւոր ընել, ուրիշ աւագութեանց համանելու համար, փառասիրութիւննին

<sup>1</sup> Տե՛ Զատարաս և Դիակոս Ալեքսանդր, 1. 4.

յագեցընելու ասեն չէին կորսնցընէր . ծերակուտի ատեանը ժողովրդեան նոր պատերազմներ առաջարկելու կը յորդորէին , և ամէն օր նոր թշնամիք կը ցուցընէին իրեն :

Արդէն այս ժողովը ինքնին շատ հակումն ունէր առ այն . քանդի ժողովրդեան յարատե տրտունջներէն և խընդրուածներէն ձանձրացած , կը ջանար անոր անհանդարտութիւնը փարատելու արտաքոյ՝ զբաղեցընելով :

Արդ դրեթէ միշտ պատերազմի ժողովրդեան հաճելի էր . վասն զի աւարին խոհեմարար բաշխուելովը , զայն ժողովրդեան օգտակար ընելու հնարքը գտեր էին :

Հոռվմ՝ առանց վաճառականութե , և գրեթէ արուեստաներէ զուրկ քաղաք մ'ըլլալով , յափշտակութիւնը առանձնականաց համար հարստանալու մի միայն հնարք էր :

Ասով կողոպտելու կերպը կանոնի տակ դրած էին , և հիմակուան ֆոքր թաթարաց մէջ գործածուած ոճոյն գրեթէ նման էր :

Աւարը հասարակաց <sup>2</sup> էր , և զինուորաց մէջ կը բաժնուէր . բան մը չէր կորսուեր . իւրաքանչիւր ոք ճամբայ ելլելէն առաջ երդումն ըրած ըլլալով բան չըդողնալու : Արդ Հոռվմայեցիք աշխարհս ամենէն երկիւղած ազգն էին երդման նկատմամբ . և որ իրենց զինուորական կրթութեանը գլխաւոր կորովն եղած է միշտ :

Ի վերջո՝ Հոռվմ մնացած քաղաքացիք ալ յաղթութեան պառուղը կը վայելէին : Պարտեալ ժողովրդոց երկիրներուն մէկ մասը կը գրաւէին երկու մասն բաժնելով , մին 'ի շահ հասարակաց , միւս մասն ալ աղքատ քաղաքացւոց կը բաշխէին , Հասարակապետութեան տուրք մը հատուցանելու պայմանաւ :

Հիւպատոսները , առանց աշխարհակալութեան և կամ յաղթութեան չկա-

րենալով յաղթանակի պատիւը ունենալ , սաստիկ կատաղութեամբ կ'ընէին պատերազմը և ուղղակի թշնամոյն վըրայ կը դիմէին , և նախ ոյժն էր որոշիչ :

Ուրեմն Հոռվմ՝ անընդհատ և բուռն պատերազմի մէջ էր . արդ այն ազգը որ և վարչական սկզբամբ շարունակ պատերազմի մէջ է , 'ի հարկէ կամ պէտք էր կործանիլ և կամ յաղթել ուրիշներուն , որք երբեմն պատերազմելով և երբեմն խաղաղութեան մէջ գտնուելով ոչ յարձըկելու այնչափ կարողք էին և ոչ ալ զիրենք պաշտպանելու բաւականապէս պատրաստք :

Այս կերպով Հոռվմայեցիք , խորին հմտութիւն ստացան զինուորական արհեստին : Անցողական (զիպուածական) պատերազմաց մէջ օրինակաց մեծ մասը կը կորսուին , խաղաղութիւնը ուրիշ զաղափարներ կու տայ , և սխալմունք և առաքինութիւնք անգամ կը մոռցուին :

Անընդհատ պատերազմելուն սկըզբանց ուրիշ հետեանք մ'ալ այս եղաւ , որ Հոռվմայեցիք առանց յաղթող ըլլալու ոչ երբեք խաղաղութիւն ըրին . յիրաւի , ինչ օգուտ կար ժողովրդեան մը հետ ամօթալից հաշտութիւն ընելով ուրիշի վրայ երթալ յարձըկիլ :

Այս մոտածմամբ որչափ յաղթուէին՝ այնչափ ալ իրենց պահանջմունքը կ'աւելցընէին , որով յաղթողները կը սարսափիցընէին , և իրենք զիրենք ալ աւելի կը ստիպէին յաղթող ըլլալու :

Սոսկալի վրէժինդրութեանց միշտ ենթակայ ըլլալով՝ քաջութիւն և երկայնամտութիւն իրենց կարենը եղան . և այս ձիրքերը չկրցան բաժնուիլ իրենց վրայ յանձնասիրութենէ , 'ի սիրոյ ընտանեաց , հայրենասիրութենէ և այն ամեն բանէն որ սիրելագոյն է 'ի մարդիկ :

Խտալիոյ ժողովուրդք՝ պաշարմանց պէտք եղած մեքենաները չէին գործածեր՝ . ասկից 'ի զատ զօրականք ունիկի

<sup>1</sup> Նոյնը յայտնապէս կ'ըսէ Դիոն . Ալիկառնացի . Ա. 9 . և կը հաւաստի նաև պատմութեամբ : Զէին գիտեր ամենեին պատնէներ չինել՝ զիրենք 'ի պա-

<sup>2</sup> Տէ՞ս Պուէիս Ա. 10 . Գլ. 16 .

չունենալով, անկարելի էր երկայն ա-  
տեն զանոնք բերդի մը դիմաց բռնել.  
ասով իրենց պատերազմաց մեծագոյն  
մասը որոշողական չէին: Թշնամոյն բա-  
նակը և կամ երկիրները կողոպտելու  
համար կը պատերազմէին. յորմէ յե-  
տոյ յաղթողն յաղթեալ իր քաղաքը կը  
վերադառնար: Ահա այս է իտալիոյ ժո-  
ղովրդոց դիմանալուն և Հռովմայեցւոց  
ալ զանոնք նուաճելու ունեցած յամա-  
ռութեանը պատճառը. և ասով է որ այս  
վերջինները այնքան յաղթեցին առանց  
զեղծանելու և միշտ ազգատ մնալով:

Եթէ մերձակայ քաղաքները արա-  
գաբար նուաճած ըլլային՝ Պիւռոսի,  
Գաղղիացւոց և Աննիբաղայ արշաւա-  
նաց ժամանակ անկատութեան մէջ կ'ըլ-  
լային. և բոլոր աշխարհիս տէրութեանց  
ճակատագրին նման յազգատութենէ  
շուտով հարստութեանց հասած կ'ըլ-  
լային և 'ի հարստութեանց 'ի մեղկու-  
թիւն:

Այլ Հռովմ միշտ ոյժ թափելով և  
միակերպ արգելքներ գտնելով իր զօ-  
րութիւնը կը ցուցընէր, առանց զայն  
ընդարձակել կարենալու, ու ամենա-  
փոքր տարածութեան մը մէջ, բոլոր  
տիեզերաց մահացու ըլլալիք զօրու-  
թեանց ինքինքը կը հրահանգէր:

Իտալիոյ ամեն ժողովուրդները նոյն  
աստիճանի պատերազմասէր չէին: թու-  
քանացիք իրենց հարստութեամբը և  
զեղիսութեամբը մեղկացած էին. Տա-  
րենտացիք և կապուացիք, կամպանիոյ  
և Մեծին Յունաստանի զրեթէ բոլոր  
քաղաքներուն նման՝ պարապութեամբ  
և զուարճութիւններով կը թունային.  
այլ Լատինք, Հեռնիկք և Սաբինացիք,  
Եկուեանք և Վոլսկեանք պատերազմ  
շատ կը սիրէին. Հռովմայ բոլորտիքն  
էին. անհնարին ընդդիմակալութիւնը

շարեց պատսպարելու համար. յարձակելով և  
սանդպելով կը չանային քաղաքն առնուլ: Նւփո-  
րոս գրեց թէ Արթիմոն Ճարտարապետը մեծա-  
յաղթ մեքենաներ հնարեց ամրաշէն պարիսպները  
փըլքնելու համար, զորոնք նախ առաջին Պերիկ-  
լէս գործածեց 'ի պաշարման Սամոսի, կ'ըսէ Պլու-  
տարք. Կէնառգրութիւն Պէրիկլէս:

Րին իրեն դէմ, և պինդ զիմացկունու-  
թեան կողմանէ իրեն վարպետք եղան:

Լատին քաղաքները Ալպեան գաղ-  
թականութիւններ էին՝ զորոնք հաս-  
տատեց Լատինոս Սիլվիոս<sup>1</sup>: Ոչ միայն  
Հռովմայեցւոց պէս էր ծագումնին, այլ  
և նոյն ծէսերն ունէին. և Սերվիոս Տուղ-  
ղիոս<sup>2</sup> անոնց խորհուրդ տուեր էր տա-  
ճար մը կառուցանելու 'ի Հռովմ, որ  
ըլլայ երկու ժողովրդեան միութեանը  
կեղրոն: Հռեգիլլոն լճին մօտ մեծ ճա-  
կատամարտ մը կորսնցընելով, Հռովմա-  
յեցւոց դաշնակից և պատերազմաց նի-  
զակակից ըլլալու հարկադրեցան<sup>3</sup>:

Տասնապետաց կարճատև բռնաւո-  
րութեանը ժամանակ յայտնի տեսնուե-  
ցաւ թէ Հռովմայ մեծնալը որքան իր  
պատութենէն կը կախուէր: Տէրու-  
թիւնը կարծես թէ զինքը շարժիչ ողին  
կորսնցուցած էր<sup>4</sup>:

Միայն երկու տեսակ անձինք գըտ-  
նուեցան քաղաքին մէջ. անոնք որ գե-  
րութիւն կը կրէին, և այնպիսիններ՝ որ  
իրենց անձնական շահուն համար զայն  
կրել տալու կը ճգնէին: Ծերակուտի  
անդամները իրը օտար քաղքէ մը՝ Հռով-  
մէն մեկուսացան և մօտակայ ժողո-  
վուրդք՝ ամենսին ընդդիմակացութիւն  
չի գտան:

Ծերակոյտը զօրաց ռոճիկ տալու  
հնարքը գտած ըլլալով վէկէսի պաշար-  
ման ձեռք զարկաւ, որ տասը տարի  
տևեց: Հռովմայեցւոց մէջ նոր ճարտա-  
րութիւն երևցաւ և պատերազմելու նոր  
կերպ, փառաւորագոյն յաջողութիւն-  
ներ ունեցան, և անոնցմէ մեծագոյն օ-  
գուտ քաղեցին. և աւելի մեծամեծ աշ-  
խարհակալութիւններ ըրին, շատ աւելի  
զաղթականութիւններ զրկեցին. միով


1 Խնչպէս որ կը տեսնենք Մագուած Հառվետական-  
ուգին անուանեալ մէկ տաղին մէջ, որ Վիկտոր  
Աւրելիոսի կը համարուի:

2 Դիռն Ավետառացի, Գլ. Դ.

3 Տէս Դիռն. Ավետառացաց մէջ Գլ. Զ. իրենց  
հետ հաստատուած դաշներէն մէկը:

4 Ժողովրդեան գրաւոր օրէնքներ տալու պա-  
տրուակաւ, վարչութեան տէր եղան: Տէս Դիռն.  
Ավետառացի, Ա. 11. էր. 680 և աջորդութիւնը:





բանիւ վելիսի առումը տեսակ մը յեղափոխութիւն եղաւ:

**Այլ** աշխատանքն ալ նուազագոյն չեղաւ: Եթէ Թուքանացւոց, Եկուեանց և վոլսկեանց մահացու հարուածներ տուին, նոյն իսկ այս բանիս պատճառաւ իրենց դաշնակից լատինք և Հեռնիկը որոնց վէնքերնին և կրծութիւննին Հռովմայեցւոց նման էր, զիրենք ձգեցին և իրենց հակառակ Թուքանացւոց հետ դաշնակցեցան, և իտալիոյ ժողովրդոց ամենէն պատերազմաէր Սամիացիք՝ իրենց հետ սոսկալի կարողութեամբ կռուեցան:

Ծերակոյտը ուոճկին հաստատութենէն 'ի վեր պարտեալ ժողովրդոց երկիրները ալ չէր բաժներ զինուորաց. ուրիշ պայմաններ դրաւ. զոր օրինակ՝ զիրենք ստիպեց բանակին առ ժամանակեայ հարկ հաստուցանելու, զգեստեղէն և ցորեն տալու:

Հռովմ'ի կելտաց առնուելովը, զօրութիւնը ամեննին չիկորանցուց. բոլոր բանակը որ աւելի ցրուեալ էր քան թէ պարտեալ վէյէս քաշուեցաւ. ժողովուրդը մերձակայ քաղաքները փախաւ, և քաղքին հրդեհը սոսկ հովիւներու քանի մը խրճիթներուն հրկիզիլն եղաւ:

**Թարգմանեաց** 'ի Գաղղիերէնէ ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻ ՌԵՒԶԵԱՆ

Կը շարունակուի:

### Լ. Մ. Ա.:

ՄԵՐՐԻ ԱՆԴՐԱՅԱՑՈՅ ԱԳՏՈՒԱԾ ԼՈՒՍԱԿԱՐԻՉ ԵՂԲԱՑ ՎՐԱՑ ԳՐԱՆ ՑՈՂԵՐԸ:

.... Օր մըն ալ Անդրիացւոց ումանց այցելութիւնը կ'ազդեն ինծի: Կարեւոր գիր մը գրելու զբաղած էի. բայց կարելի չէր այցելուաց հիւրընկալութիւնը զանալ: Կը փութամ կը դիմաւորեմ, և առաջին քաղաքավարական ընդունելութենէն ետքը, խօսքը կը սկսի արելքի վրայ շրջիլ:

**Այն** պարոնայք արևելքի ճամբոր-

դութենէ մը կը դառնային և իրենց այլ այլ յիշատակաց մէջէն, կոստանդնուպօլայ ազգած քաղցրութիւնները կը յիշէին: Արևելեան ժողովրդոց մէջէն իրենց ուշադրութիւնը չայք զրաւեր էին. և մեծ եռանդեամբ կը յիշէին անոնց մարդասէր հիւրասիրութիւնը, քաղցր մարդավարութիւնը և սիրտ շահող անոյշ վարմունքը:

— Յիրաւի, ըսաւ մէկը, մեր բոլոր համակրութիւնը չայք զրաւեցին, և արժանի են: Արևելքի ժիր գործաւորքն են, և մեծ յոյս կու տան թէ բարեյածող ու յառաջադէմ ապագայ մ'ունին:

— Ինծի զարմանք մեծ ազգեցին, ըսաւ միւսը, անոնց ճարտար արուեստագիտութիւնքն: Մանաւանդ թէ մեծ պարծանք զգալու էք դուք, չայքդ, ազատ արուեստիցնկատմամբ, աշխարհածանօթ համբաւ ունեցող ճարտարներ ունենալով: Լուսանկարչութեան արուեստին մէջ արդի աշխարհահռչակ ճարտարներէն մէկն ունիք: Շատ իսկ լսած էինք Ապտուլահ եղբարց անունը. բաղդ ունեցած ըլլալով անոնց ճարտարարուեստ գործերը մօտանց տեսնել, կը հաստատենք թէ համբաւոյն արժանաւորք են:

Յայտ է թէ այս պարծանաց անզգայ սրտով չէի կրնար լսել. սրտէս կ'ուրախանայի և կը ջանայի անոնց եռանդուն խօսքերուն երախտագէտ երևոյթ մը ցուցընել: Անտարակոյս է որ գովասանքը ուստի ալ դայ՝ միշտ ուրախութիւն ու խրախոյս կ'ազդէ. բայց բնական է որ մարդ աւելի ուրախութիւն զգայ երբ օտար յառաջադէմ ազդի մը անձինք իր բուն ազգայնոց պարծանքները խրախուսելով անկեղծութեամբ կը գովաբաննեն:

— Անշուշտ, ըսաւ դարձեալ այցելուներէս մէկը, կը ճանշնաս Մըրրէյ անգղիացւոյն Առձեռն առաջնորդ գիրքը, որ ընդհանրապէս ամեն Անզիացւոյ ճանապարհորդի ձեռքն է:

— Այո, ըսի, շատ անզամ տեսած եմ, և եթէ չեմ վրիպիր ձեր ձեռքի գիրքն՝ նոյն այն է: